Արձանագրություն N 2

«ԳԳՀ-ՀՄԱԾՁԲ-26/17» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «17» օգոստոսի 2026թ.
ժ.12.00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Ավագյան – հիմնադրամի վերլուծաբան-հետազոտող
Հանձնաժողովի անդամ՝ Գ. Ափոյան – հիմնադրամի տնօրենի օգնական
Հանձնաժողովի անդամ՝ Ա. Խանպիկյան – հիմնադրամի վերլուծաբան-հետազոտող
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Դալլաքյան - գնումներ համակարգող

1. «ԳԳՀ-ՀՄԱԾՁԲ-26/17» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի գնային առաջարկների ներկայացման, գնահատման արդյունքների հաստատման /ընթացակարգի արդյունքների ամփոփման/ մասին.

1.1 Գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվել են 17.08.2026թ. ժ.12.00-ին «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի շենքում, ք.Երևան, Մ.Բաղրամյան 24/6, 7-րդ հարկ հասցեում, որը համընկնում էր հայտերի ներկայացման վերջնաժամկետին: ՀՀ կառ. 01.06.2017թ.N 526-Ն որոշման 21-րդ կետի դ/ ենթակետի համաձայն հրավերը ուղարկվել էր «ԲԱՍՍ ԲՈՒՏԻԿ» ՍՊԸ-ին և հրապարակվել minfin.gnumner.am կայքում: Հանձնաժողովի բոլոր անդամները ներկա են, նիստը համարվում է իրավազոր և բացված:

1.2. Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը
1	«ԲԱՍՍ ԲՈՒՏԻԿ» ՍՊԸ	Հասցե՝ ՀՀ, 0019, ք. Երևան, Այգեձորի փ. 3/1շ. Հեռ. 043-26-10-80, ՀՎՀՀ 08262923 bassboutiquehotel@gmail.com

Գնային առաջարկներ չեն ներկայացրել մնացած մասնակիցները:

1.3 Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.3.1 Տվյալներ ծրարները ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու մասին: Անհամապատասխանությունները բացակայում էին:

1.4 Տվյալներ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանության մասին:

1.4.1 «ԳԳՀ-ՀՄԱԾՁԲ-26/17» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով մասնակիցները փակ կնքված ծրարով ներկայացրել է հրավերով սահմանված փաստաթղթերը: Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը առկա են և դրանք կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան: Ներկայացված փաստաթղթերը կազմված են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից, բնօրինակ փաթեթում ներառված բոլոր փաստաթղթերի էջերը կնքված և ստորագրված են մասնակցի կողմից:

1.5 Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

1.6. Նախագահը հայտարարեց նախահաշվային գինը: Մասնակցի առաջարկած գինը հետևյալն է.

Չ/Բ	Ապրանքի անվանումը	Մասնակիցների անվանումը	Նախահաշվային գինը ՀՀ դրամ	Գնային առաջարկն առանց ԱԱՀ	Ընտրված մասնակից «X»
1	հյուրանոցային ծառայություն	«ԲԱՍՍ ԲՈՒՏԻԿ» ՍՊԸ	1 008 000	1 008 000	«X»

1.7 Մասնակիցների ներկայացրած գնային առաջարկնում թվաբանական անճշտություններ չկան: Հիմնավորումներ չեն ներկայացվել:
1.8 Գնահատող հանձնաժողովը գնահատեց մասնակցների կողմից ներկայացված հայտերը, որոնք համապատասխանում են հրավերով նախատեսվածին: Հայտերը գնահատվել է բավարար:Գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ՀՕ-21-Ն

Որոշում – 26/17-2

1. Բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի (ՀՕ-21-Ն) 34-րդ հոդվածի 6-րդ մասով.
   - 1-ին, չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «ԲԱՍՍ ԲՈՒՏԻԿ» ՍՊԸ -ին:
2. Հաստատել ՀՄԱ ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:
3. անգործության ժամկետ չի սահմանվում համաձայն «Գնումների մասին» օրենքի (ՀՕ-21-Ն) 10-րդ հոդվածի 4-րդ կետի: Սահմանված կարգով ծանուցել ընտրված մասնակցին. ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկն ու նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

1.9 Նիստին ներկա հանձնաժողովի անդամները.

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Լ.Ավագյան

Հանձնաժողովի անդամ՝ _____ Գ.Ափոյան

Հանձնաժողովի անդամ՝ _____ Ա.Խանպիկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Հ. Դալլաքյան

Հաստատված է
«13» « օգոստոսի » 2026թ.
Ընդամենը՝ 3էջ
Կ.Տ.

Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

Ընթացակարգի հայտերի

Պատվիրատուի անվանումը՝ «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԳԳՀ-ՀՄԱԾՁԲ-26/17»

Գրանցամատյանի պատասխանատու՝ _____
ստորագրություն

Մաս I
Սահմանված կարգով ներկայացված հայտեր

հ/հ	Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը (անունը, ազգանունը)	Մասնակցի այն գրության ելից և պատվիրատուի նույն գրության մտից համարները,որով ներկայացվել է հայտը (Հայտը առձեռն ներկայացված լինելու դեպքում այն ներկայացնողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը և համարը)	Հայտերի ստացման		Հայտը գրանցողի ստորագրությունը	Նշագրություն
			ամիսը, ամսաթիվը	ժամը		
1	2	3	4	5	6	7
1	«ՔՎՎՎ ԲՈՒՏԻԿ» ՍՊԸ	Տեղեկանք գրավոր գործունեության վերաբերյալ ել.թիվ AT10353555 ստաց. 14.01.2020թ. 005	17.08.2026	11⁰⁰		-

Մաս II
Սահմանված կարգի խախտմամբ ներկայացված հայտեր

հ/հ	Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը (անունը, ազգանունը)	Մասնակցի այն գրության ելից և պատվիրատուի նույն գրության մտից համարները,որով ներկայացվել է հայտը (Հայտը առձեռն ներկայացված լինելու դեպքում այն ներկայացնողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը և համարը)	Հայտերի ստացման		Հայտը գրանցողի ստորագրությունը	Անհամապատասխանության մասին կցվող արձանագրության համար
			ամիսը, ամսա-թիվը	ժամը		
1	2	3	4	5	6	7